

Ամենապայծառ ծերունի Վրդանէս Ար-
հիեպ.ն յաւետ սիրով ողջունէ զգերյարգութիւնդ,
հանդերձ քոյայնովքդ:

*Բազմաւ գերագանցականաւ Յատկեղոթ նամք
պերճացելոյ՝ Տեառն Տեառն Միօրթարայ Արքայի
մեծի, եւ տեսականորչի Անուանեալ կարգի, ձօնեալ
նորախնացի յորդագեղոռն սիրով ողջոյն տէրո-
նակաւ:*

Գրեթէ որքան մերձին աւուրք ճանապար-
հորդելոյն իմ դէպ առ այդր, այնքան ածին առ
իս աստիճանք ուրախականի կրից: Եւ այս զգամ
թէ մանաւանդ թէ ծագի ի խանդաղակաթ ըզձէ
տեսանելոյ զգերամեծարելիդ քան զայլս բարեկամ
բարեբարոյս: Որոյ արժանաւորիլն արժէ որքան առ
իս անդր քան զբազում գինս: Իցէ թէ՛ թերեւս
արժանացայց ազօթիւք Տեառնդ: Զնորագունից
չունիմ ինչ գրելի առ քեզ, եթէ ոչ զայս միայն՝
թէ սուրբ ժողովքն գործունապէս կամի բառնալ
զձկնակերութիւնն յաւուրս պահոց, ի յուղղա-
փառաց ազգի մերոյ, եւ այն ազդողագունիւ Տէ-
քրէթիւ պապականաւ, ի գելումն աղեաց մերային
մխիոնարաց, եւ աղաղակողաց թէ նշան յայտնա-
դունի ուղղափառութեան՝ է ձկնակերութիւնն
յաւուրս պահոց: Այլ եւ եթէ կամեսցի Տէր,
մինչեւ ցլրումն ամոյս այսորիկ ելանեմ աստի, իցէ
թէ ծովային ճանապարհաւ Անքօնայու: Եւ եթէ
ունիցի Հայրութիւն քո՝ որքան պատկան առ իս՝
կատարելի զպաշտօն ինչ. վարկեա՛ թէ՛ հրամայելն
քո զայն ինձ ազատաբար, է ինձ մեծ ուրախու-
թիւն, եւ եմ պատրաստ բոտ ամենայնի ի կատա-
րել, որքան կարեմ: Վերջապէս, կարես զայլս որ-
պիսութիւնս մեր վերաիմանալ ի գրաբերէ այս-
մանէ, որ յառաջեաց վաղագոյն քան զմեզ, որոյ
եւս հրեշտակ Տեառն լիցի ուղեկից, ի պահել զնա
յամենայն ճանապարհս իւր: Ամէն: